

Դասընթացի անվանումը՝	«Արդարացման դատավճիռ»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քրեական դատարանի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար: Դասընթացը կարող է օգտակար լինել նաև վճռաբեկ դատարանի քրեական սլախտի դատավորների համար:

Դասընթացն անդրադառնում է արդարացման դատավճիռ կայացնելու հետ կապված հիմնախնդիրների քննարկմանն ու վերլուծությանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Արդարացման դատավճիռ կայացնելու և գործի վարույթը կարճելու հարաբերակցությունը:
- Արդարացման դատավճիռ կայացնելու հիմքերը:
- Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում կայացվող դատական ակտի առանձնահատկությունները:

Դասընթացը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական սլախտի դատավոր Հովհաննես Ղուկասյանը: